ուսումը իրաւաբանութեան բաժնի մէջ, Եէյլի համալսարանէն ստացած է կրթաթոշակ և վկայուած իբրեւ մագիստրոս (Masters's Degree)։ 1988-ին Թորգոմ Արք. Մանուկեանի կողմէ ստացած է վարդապետական աստիճան։ Երկու և կէս տարիներ եղած է Ամերիկայի Ս. Վարդան եկեղեցւոյ լուսարարապետ, որմէ յետոյ նշանակուած է Սբ. Թովմաս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ։ 1993-ին ստացած է Ծայրագոյն Վարդապետի աստիճան։

«Սիոն» յանուն Նորին Ամեն. Ս. Պատրիարք Հօր և բովանդակ Միաբանութեան, կը շնորհաւորէ Հոգեշնորհ Յոբելեարի Քահանայական Ձեռնադրութեան Քառասնամեակը, և կը մաղթէ որ Աստուած օգնական ըլլայ և զօրացնէ անոր։

ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ 35-ԱՄԵԱԿ
ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԳՈՒՍԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼՃԱՆԵԱՆԻ

Ծնած է Պոլիս, 1965-ին։ Աշակերտած է տեղւոյն Գարակէօզեան և Եսայեան Վարժարաններուն։ 1975-ին Երուսաղէմ գալով՝ մէկ տարի կ'աշակերտի Սբ. Թարգմանչաց Վարժարանին և ապա կ'անցնի Ժառանգաւորաց Վարժարան, որուն ընթացքը աւարտելէ ետք, 1982-ին կը ձեռնադրուի սարկաւագ։ 1983-ին ձեռամբ օրուան Լուսարարապետ Տ. Գարեգին Արք. Գազանճեանի ձեռնադրուած է կուսակրօն աբեղայ։

1986-1988 եղած է փոխ-տեսուչ Ժառանգաւորաց Վարժարանի։

1985-1987 տարիներուն եղած է Եաֆայի և Հայֆայի Տեսուչ։

1990-2013 տարիներուն Իսրայէլի և արտերկրի մէջ կատարած է աւելի քան հարիւր համերգներ։ Տուած է հարիւրէն աւելի դասախօսութիւններ Հայ Եկեղեցւոյ Պատմութեան, Աստուածաբանութեան և արուեստի մասին։ Այդ տարիներուն եղած է նաեւ Սուրբ Երկրի «Ecumneic circle of the friends» կազմակերպութեան անդամ։

1991-1993 ուսանած է Երուսաղէմի Սուրբ Երկրի Աստուածաշնչեան համալսարանին մէջ։ Նոյն տարիներուն եղած է Տեսուչ՝ Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի և դասաւանդած է Հայ Եկեղեցւոյ Պատմութիւն Ժառանգաւորացէն ներս։

2002-2013 տարիներուն եղած է Սուրբ Աթոռոյս Աւագ Թարգման և դիւանագիտական յարաբերութեանց պատասխանատու։

2004-2006 տարիներուն Եբրայական համալսարանի երաժշտութեան բաժնին կողմէ վկայուած է իբրեւ մագիստրոս (Master's Degree)։

2013-ին հրաւիրուած է Ժնեւ և նշանակուած տեղւոյն Սբ. Յակոբ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ։

2014-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ նշանակուած է Զուիցերիոյ Առաջնորդական Տեղապահ։

«Սիոն» բովանդակ Միաբանութեան շնորհաւորանքը կը բերէ Հոգեշնորհ Հայր Սուրբին անոր Քահանայական Ձեռնադրութեան 35-ամեակին նուիրուած այս յարգանքին մէջ։

ԽՄԳ.